ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԳԱՐԱԳԵՏ ԵԱՂՈՒԲԵԱՆ, **ՀԱՑԵՐԷՆ-ՌՈՒՍԵՐԷՆ ԲԱՌԱՐԱՆ.** *Թիֆլիս, տպ. Ե. Մարտիրոսեանցի* 1891 *թ.* [1]);

(Շարունակութիւն և վերջ [1])

Սորանով ես կը վերջացնէի իմ ասելիքը պ. Եաղուբեանի բառարանի մասին, եթէ հարկ չը համարէի մի քանի խօսք ասել այդ բառարանին կցած քերականութեան մասին. Ամեն մի բառարան կազմող հարկաւոր է համարում մի գոնեա կարճառօտ քերականութիւն կցել իւր բառարանին, և այդ հասկանալի է. քերականութիւնը, բացի իւր բուն նշանակութիւնը, լեզուի ուսումնասիրութեան գործի մէջ հանդիսանում է իբրև բառարանի լրացուցիչ և օժանդակ մի մասը. Ցաւալի բան է որ բառարանը չէ կարող տալ մի որ և է բառի բոլոր փոփոխութիւնները. մինչդեռ այդ բոլոր փոփոխութիւնները, ընդհանուր կանոնների տակ գցած, տալիս է քերականութիւնը և դորանով թեթևացնում է այն բեռը, որ հակառակ դէպքում պիտի կրէր բառարանը. օրինակ՝ գործեց, գործով, գործում այն չէ ինչ որ գործ. ուրեմն եթէ քերականութիւնը չ'օգնէր, այդ պիտի անէր բառարանը. Միևնոյն ժամանակը քերականութիւնը, այդ թեթևութիւնը տալով բառարանին և լեզուն ուսումնասիրողին, մեջտեղ է տալիս հնչուածքեամբ գտնել բառարանի մէջ բառի սկիզբը, որը միայն ընդունված է բառարանի մէջ, ինացեալ փոփոխութիւնները քերականութեանը յանձնելով. Հետաքրքրելի է ուրեմն իմանալ թէ ինչքան է յաջողած պ. Եաղուբեանի բառարանի այդ օժանդակ մասը. Տարաբաղդաբար այս դէպքում էլ պիտի դուժեմ անկախողութիւն և անբաւարարութիւն. սխալները, թիւրիմացութիւնները և թերութիւնները սկսում են հէնց այդ ու բէնից. Հաւատարիմ մնալով Ախալցխայի բարբառին պ. Եաղուբեանը վե-

---

[1]) Տե՛ս «Մուրճ» № 2, 3.

բագրում է հայկական ալբբենարանի մի քանի տառերին այն արտասանութիւնը, որ ունին այդ տառերը միայն արևմտեան բարբառներում.

ֆ տառ է=xз
ձ » =xր
ճ » =xջ
ջ » =xկ

Ցոյց է տալիս զարմանալ վարվում և չէ տալիս

թէ ինչու պ. Աղուբեանը հետևողաբար չէ

բ=bh, ph, p.
գ=gh, kh, k.
դ=dh, th, t.
կ=g, kh (ք)
պ=b
տ=d

Ես նպատակ չունիմ և տեղն էլ չէ այստեղ երկար դատողութիւններ և հետազօտութիւններ անելու լիչեալ տառերի արտասանութեան մասին. բանը շատ պարզ է. առաջինը չորս տառերին պ. Աղուբեանը տվել է մեր արևմտեան բարբառներում տիրող արտասանութիւնը, միւս վեց տառերին՝ այն արտասանութիւնը, որը լսւում է արևելեան բարբառներին, գոնեա նոցա չորս գլխաւորներից երևքին [1]) և որը ընդունված է արևելեան գրական լեզվում. թէ ինչ հիման վերայ է պ. Աղուբեանը այդպէս բաժին արել այդ տառերը, այդ մեզ յայտնի չէ, իսկ խոհեմութիւնը թոյլ չէ տալիս ինձ ենթադրութիւններ անելու. կ'ասեմ միայն՝ եթէ դեռ լեզվի համ բառարանի մէջ ներելի է գաւառաբանութիւններ մտցնելը, այդ անելի է ալբբենարանի մէջ. Բառի արտասանութիւնը կարող է ժամանակով փոխվել, բայց այդ չէ նշանակում թէ հնչիւնին միանգամից տված անունն էլ (տառը) պիտի փոխվի. կարող է, օրինակ, լատինական mater դառնալ իտալեերէն madre, բայց այդ չէ նշանակում թէ դորա հետ միասին և է-ի անունն էլ փոխվում է d. t տառը միանգամից այդպէս անվանված լինելով, պահում է իւր անունը. բայց եթէ mater բառի մէջ նորա փոխարէն լսվում է արդէն d, այդ հնչիւնի համար էլ ալբբենարանը տալիս է d տառը. այդպէս էլ հակերէն. օրինակ՝ ծաղիկ բառը կարող է այժմ մի քանի բարբառներում արտասանվել յաղիկ, բայց այդ չէ նշանակում թէ ծ և ղ տառերն էլ պիտի փոխեն իրանց սկզբնական բուն անուններըը [2]). կարող է ալ ևս ծաղիկ չ'ար-

---

[1]) Բացառութիւն է կազմում դարբաղինը.

[2]) ծ, ձ, ղ տառերի եւրոպական տրանսկրիպցիայի մասին տ. Ագուլ. բարբ. երես 56.

առասանվել, ալ ձաղիդ, բայց այդ պիտոյքի համար՝ այդ արտասանութեան համար մեր Մեսրոպական ալբբենարանը չէ վարանում և տալիս է այդ հնչիւններին համար սահմանված տառերը ֆ, փ։ Առանց երկարացնելու առնենք՝ պ. Նաղուբեանը, բերելով ընդհանուր հայերէնի ալբբենարանը, չը պիտի մոռանար որ նորա տառերը ունին իրանց յօրինողից միանգամ ընդ միշտ տուացած անուններըւ Մի տառի տեղ միւս տառը դնելը կարող ենք, դուցէ լաճախ տիպված էլ ենք լինում. բայց տառի անունը (հնչիւնը) փոխելու ոչ իրաւունք և ոչ հարկաւորութիւն կայ. ալլապէս վարվելով այնպիսի անհեթեթութիւններ կը կատաջանան, որոնց չնորհիւ Venedig բառը մեզանում դառել է Վ.ենետիկ (=Venetik) և baron (բարոն) բառը՝ պարոն (paron)։ Տառերի այսպիսի աղաւաղում չը պիտի թոյլ տար իրան պ. Նաղուբեանը, մանաւանդ այն պատճառով, որ իւր բառարանում ընդհանուր հայերէնի ալբուբենն է բերում և ոչ այս կամ այն բարբառինը և նամանաւանդ որ իւր կատաջաբանում հաստատացնում է թէ՝ «պահպանված է արարատեան բարբառի քերականութիւնը». ուրեմն պիտի պահպանվէր և տառերի այն արտասանութիւնը, որ կատում է արարատեան հայերէնին և առաւել՝ նորա գրականական լեզուին։ Ապա ուրեմն պ. Նաղուբեանի ասած ծ=ձց պիտի ուղղվի ծ=ցց, ձ=ձձ պիտի ուղղվի=ձց. ճ=ձջ պիտի ուղղվի ցջ։ Ալս իսկ հիման վերալ հարկաւոր է ուղղել պ. Նաղուբեանի բառարանի մէջ բերած բազմատիպ բ ու տ ֆ բառի ուղղագրութիւնը. նախ՝ եթէ այդ բառի եւրոպական գրութիւնն ու արտասանութիւնն է բ ու ջ է (ֆրանս. budget), ուրեմն և հայերէն պիտի հնչէր և գրվէր բ ու ջ է և ոչ բ ու ջէ, ասելի պակաս՝ բ ու ֆ է. երկրորդ՝ եթէ պ. Նաղուբեանը հիմնվում է այն բանի վերալ թէ՝ ճ=ձջ, այն ժամանակ պէտք չէր փ (ֆ), և երրորդ՝ պ. Նաղուբեանը մոռանում է որ իւր ալբբենարանում ա=ա. իսկ ալտեղ ալս եւրոպական խօսքը տալիս է ա հնչիւնը և տառը, որը նոյն ալբբենարանում իրաւացի=ա։ Ուրեմն բ ու ֆ է դրվելը բոլորովին և կոպիտ սխալ է, բ ու ֆ է նոյնպէս սխալ է, մի քիչ պակաս սխալ է բ ու ջէ և բ ու ջէ, ուղիղն է բ ու ջ է։ Չը նայելով որ պ. Նաղուբեանը իւր ալբբենարանում բերում է գ=ղ, բայց նորա բերած բ ու տ ֆ բառի մէջ տեսնում ենք ա=ա և այդ պատահական չէ. τεχνυζω բառը նա նոյնպէս գրում է տալմուս, ուսք փոխանակ ուադ (ուադ անել). նոյնը նկատում ենք ֆ-ի վերաբերեալ. Թէն ալբբենարանում բերում է գ=ր (ուղիղ է), բայց գործադրելիս մենք տեսնում ենք հակառակը. օրինակ՝ αρχιπελαγ՝ նա գրում է արչիպելագոս, մինչդեռ դա լունարէն բարդ բառ է և բարդութեան երկրորդ մասը pelagos բառն է, իսկ գ=ր-ի։ Նկատելու արժան է և այդ բարդութեան առաջին մասի լունական φ ( ) հայերէնում փոխված չ-ի. ես կը գրէի արչիպեղագոս։ Ի դէպ է ասել՝ ածականների (ի)կական վերջաւորութիւնը պ. Նաղուբեանը չը գիտէ որը պահէ ական թէ ական. նա գրում է՝ ֆիզիական,

բայց՝ մաթեմատիկական. + ես սխալ եմ համարում. պիտի լինի և ապինքն՝ ինչական և ոչ ինչական, որովհետև այդ վերջաւորութիւնը բաղկացած է երկու մասից՝ ինչ+ական. առաջին մասը լոճական ik տաֆֆիքան է (այդ հիմանե վերայ սխալ է և ֆիղիչաչ), երկրորդը հայկական (ա)կան վերջաւորութիւնը. ուրեմն պիտի լինի ֆիզիչական և ոչ ֆիզիչական. այդպէս (ապինքն՝ չևոչ) պիտի գրվեն բոլոր միա՝ նոյն ծագումը ունեցող բառերը։

յ-ի արտասանութիւնը բառի սկզբում պ. Նաղուբեանը չէ նշանակել. Այդ տառը բառի սկզբում վաղուց արդէն թաւացել է հ-ի հնչիւնն է առաջել (բացի զօկերէնից և Ալեքսանդրոպոլի բարբառից, որոնք պահել են այդ տառի սկզբնական արտասանութիւնը=j)։ Իսկ ը-ի արտասանութիւնը բացատրելու համար բերած օրինակը թէ՝ говорить բառը, ∘ բաց թողնելով արտասանեն՝ ապինքն՝ г'ворить, կը տանանք г-ի և в-ի մէջ տեղում մի հնչիւն=հաղերէնն ը. ճիշդ չէ. ի հարկէ՝ եթէ Гладстонъ էլ Մկրտիչ-ի պէս արտասանենք, երկու ը կը լսենք. բայց թէ այդ խօսքերը արտասանողը եթէ հայ չը լինի ը-եր չենք լսիլ. Այդ հնչիւնի համապատասխանը եթէ ռուսերէնում որոնելու լինենք, կը գտնենք ы (ըj) տառի հնչիւնում, բայց թողնելով նորա j՝ Լեզվագէտներին լաւանի է որ մեր ը=ալավոնական ъ-ին. իմ համեմատութեան ճշդութիւնը, ինչպէս տեսնում էք, ոչ միայն արտասանութեամբ է հաստատվում, այլ միևնոյն ժամանակը գրաֆիկական է՝ ы=ъj=ըj. j-երը դէն գցենք, կը տանանք ը=ъ

ա-ի մասին պ. Նաղուբեանը ասում է թէ՝ բառի վերջին այդ ձայնաւորը չէ գրվում (ուզում է ասել՝ առանց յ-ի, որը չէ արտասանվում). բացառութիւնների մէջ չէ լիչված ապա բառը, որը նոյնպէս առանց յ-ի է գրվում. Բացառութիւնների մէջ թէև լիչված են ի- վերջացած չատուկ անուններըը, բայց պ. Նաղուբեանը առանց քաչվելու գրում է իւր բառարանում Ֆրանսիա, Գաղղիա։

Ա ն ո թ ո ւ թ ի ւ ն. Ոչ միայն ի-, այլ ա-ով վերջացած այդ բոլոր օտար բառերը ես գրում եմ առանց յ-ի, ուղղակի ա, վերապահելով յ-ն այն դէպքերի համար, երբ օտար բառը վերջանում է aj, զորօրինակ Бахдай, Бархдай, чай, Тарсачай և այլն, որ հաղերէն վալղայ, Բարկլայ և այլն գրելով՝ որոշում ենք միևնոյն ժամանակ և արտասանութիւնը aյr որովհետև, եթէ aj հնչիւնը չը լինէր կը գրէինք, ինչպէս ասացի, միայն ա-

ե, ասում է պ. Նաղուբեանը, արտասանվում է ինչպէս ռուսերէն ե. այդ չատ խոր նրբութիւն է. մեր է հաւասար է ռուսեր. э-ին, ինչպէս և պ. Նաղուբեանը լաւանում է մեզ իւր ալբուբենի ցանկում. իսկ ռուսերէն Ъ մի ալնպիսի հնչիւն է որ՝ հաւատացած եմ՝ չատ դէպքերում 10 հալից ութը չեն կարողանում ուղիղ արտասանել։

է-ի արտասանութիւնը ճիշդ է համեմատված ռուս. э-ի հետ. բայց ինչ վերաբերում է պ. Նաղուբեանի կանոնին թէ՝ այդ տառը բառի մի-

ջին պատահում է մի այլ բարդ բառերում, այդ նշանակում է թէ գէշ, դէզ, տէր, պէտ(ք) և այլն բառերը մենք պիտի ե գրենք.

է+ բառի մէջին, ասում է պ. Նաղուբեանը, տալիս է երկբարբառ ю (բիւր, աղբիւր), իսկ բառի վերջին ив (թիւ, պատիւ). բանից դուրս է գալիս որ մինչև հիմա հիւանդ բառը մենք ծուռ ենք արտասանելիս հղել (hivand), պիտի արտասանենք hюанд, ինչպէս ուսուցանում է այժմ պ. Նաղուբեանը.

ո տառի մասին խօսելով, պ. Նաղուբեանը բերում է մի օրինակ Ովրատիոս, որի կողքին փակագծում դնում է ռուսերէն Овратіосъ, Овидій. դուրս է գալիս որ Овратріосъ (որ է Горацій) և Овидій միևնոյնն է. Բառի վերջին ո առանձին չէ գրվում (отдѣльно не пишется) — ասում է պ. Նաղուբեանը. այդ որ բառի վերջին տառն է առանձին գրվում. ուզում է ասել՝ բառի վերջին ո-ն փակվում է յ-ով, որը չէ արտասանվում, Բացառութիւններից մէջ չէ լիչված ալօ բառը (եթէ չը պահանջենք հին հայերէնի ո-ով վերջացած հրամայականը՝ ուս, ապրեցո, և այլն).

«ю (ю) արտասանւում է նոյն ինչպէս լունական ν, ասում է պ. Նաղուբեանը. այժմեան լեզուում նա պատահում է միայն ուրիշ ձայնաւորների հետ բարդուած, կազմելով աւ (ав), եւ, և (ев), ու (у), իւ (ив, ю) և այլն. էլ ինչ և այլն (etc), քանի որ ասոնց միայն է և ե ձայնաւորները, որոնք մինչև այժմ իրանց կեանքումը ե-ի երես չէին տեսել (այսինքն՝ է, օ), մինչև որ վերջին երկու տարիներս պ. Աղայեանց և պ. Արասխանեանց պատգամեցին մեզ թէ՝ այսուհետև ե-ը юнъ չէ (իւն կամ իւն), այլ в (վ) է. Նորա անունն է փոքր վ և պիտի գրենք ե ինչպէս որ в (վ) ենք լսում, և գրեցին Աստլօւ. և ահա այդ օրից է, որ ե-ը ե-ի երես տեսաւ. Այդ պատգամը չատ անմեղ ոգիներ չխոթեցրեց, որոնց թվում և պ. Նաղուբեանին, որը այնքան անմեղ է (քերականութեան մէջ ի հարկէ) որ յայտնելով թէ ե=լունարէն ν, և այժմ գործ է ածվում միայն ա, ե, ի, ո ձայնաւորների հետ միասին, ինքը իւր լառաջաբանում և բառարանում գրում է թ-ում, ազն-ութիւն, գերապատուութիւն և այլն. Կանոնը ուղիղ է՝ ե=լունար. ν, այժմ նա գործ է ածվում միայն ա+ւ (ав, ինչպէս և արդի լունարէնում) ե+ւ (ев, ինչպէս արդի լունարէնում) ո+ւ (=у, հայերէն և լունարէն) ի+ւ (ив, ю [1]) բայց այդ կանոնի գործադրութիւնը (թ-ում, ազն-ութիւն,

---

[1]) Ցօդուածի այժմ հանդուցեալ հեղինակ Աբգիս Աբգանեանի կարծիքների հետ ե-ի և վ-ի վերաբերմամբ ի հարկէ մենք տարակարծիք ենք. Այն իրողութիւնից, որ գրաբառում է և ե տառերից վետ ե չէր գրում, նա ուղեցել է եզրակացութիւններ դուրս բերել, առանց ի նկատի առնելուց, որ եթէ գրաբառը մեզ կարողանար ուղեցոյց լինել այդ նոյն գրաբառում ոչ մի բառ կամ անուն չի եղել, որ բառի սկզբում ев հնչիւնը ունենար.

և այլն) ցոյց է տալիս որ պ. Նաղուբեանը իւր ասած կանոնը ինքը չը գիտէ, կամ իրան համար պարտաւորական չէ համարում [1]).

օ-ի մասին պ. Նաղուբեանը ասում է թէ՝ արտասանվում է ինչպէս երկար ô. օրինակ ոտն, օր. Ինչպէս է ըմբռնել պ. Նաղուբեանը օ-ի և ո-ի այդ տարբերութիւնը արդի հայերէնում (իբր թէ օ մենք արտասանում ենք երկար, իսկ ո—կարճ), այդ անհասկանալի է, քանի որ իսկապէս լեզուի մէջ այդ տարբերութիւնը չը կայ. և ես կասկածում եմ որ պ. Նաղուբեանը ինքը այդ տարբերութեամբ արտասանում լինի. եթէ օ նա արտասանում էր երկար, իսկ ո կարճ, այն ժամանակ այնպիսի կոպիտ տառասխալներ չէր անիլ, ինչպէս համառօտ (փոխ. համառօտ), կոպէկ (փոխան. կոպէկ), ոչ. օ միայն ձևով է որոշվում ո-ից. Բացի դորանից՝ օ մտել է հայոց այբբենարանը ոչ թէ յունարէնից XI դարում (էդ ինչու՞ հայերը մինչև XI դարը յունարէնից չ'առան), այլ եւրոպական այբբենարանից՝ մեր ա-ի օ արտասանութիւնը նշանակելու համար (ինչպէս որ ֆրանս. au=o). Այդ օ մտնելուց յետոյ՝ չատերը կամ ոգևորվելու յարմարութենից կամ լաւ չը հասկանալով, սկսեցին՝ առանց աչ ու ձախ նայելու, ամեն մի պատահած ա-ը օ-ով նշանակել (զոր. օար փոխան. աւար և այլն). Այդ չփոթութեան ժամանակ զոհ էր գնում և օտար բառերի ա-ը որ մինչև

գրաբառում էլ վանկը չկար, և էլ չէին գրում այն պարզ պատճառով, որ բուն հայերէն բառերում և անուններում այդպիսի հնչիւն, հետևապէս և վանկ չկար. իսկ բոլոր օտար բառերի և անուններն էլ-ը հին հայերը դարձրել են է-ի. Լատինաց դարձրել են Եւրոպա, Էմեն դարձրել են Սեա և այլն. Պարզ է որ հին հայերը չէին ասել էտլուցիա, այլ կ'ասէին եւտլուցա բայց եթէ արտասանէին էտլուցիա, հէնց այդպէս էլ կը գրէին. Ով որ զբաղվում է այն բանի վերայ, թէ հին հայերէնում չի գրվել է-, նա գոնէ պէտք է պատրաստ լինի օրինակներ բերելու թէ այդ ենթ հին հայերէնում գրում է եղել էվ. Եւ ի հարկէ երկար կը սպասէինք այդ օրինակներին, նոյնքան անապատ է թւում ծաղրը օ-ի նկատմամբ. օ գրելը ոչ թէ սխալ է, այլ միայն աւելորդ, քանի որ ով նոյն դերն է կատարում. և եթէ ծաղրելի է օ գրելը միայն որովհետև գրաբառում այդպիսի ուղղագրութեան չենք հանդիպում, նոյնքան ծաղրալի պէտք է լինի օվ գրելը, քանի որ գրաբառում օվ չէր գրում. Նոյնպէս պնդելը թէ ե-ը ա յժմ միայն ա, և, ի, ո տառերից յետոյ է գործածում, նշանակում է ակնկալանի կերպով ուրանալ ներկայ ժամանակի գրողների շատերի և մի քանի պարբերական հրատարակութիւնների ուղղագրութիւնը. Եւ նոյն իսկ գրաբառի համար այդ հայեացքը սխալ է, քանի որ ե-ը նաև գրաբառում գործ էր ածում ոչ միայն ձայնաւորներից յետոյ, այլ և բաղաձայններից յետոյ այսպիսի դէպքերում՝ տեղօջ, եկեղեցւոյ, գինեաւ և այլն. Ապացուցվել հեղինակի ամբողջ արգումենտացիան ե-ը տառի նոր գործածութեան դէմ՝ առնապէս անկարող է.

Ստեփ. խմբ.

[1] Իմ կարծիքը ե-ի և վ-ի մասին տես «Մուրճ» 1889 թ., № 5.

այն ժամանակը — գրվելով, այդ չփոթման ժամանակ վիճակակից եղաւ հավերջն —ին, և Պ—ղոս և դորա նման խօսքերը սկսեցին գրվել (կտաւ և արտասանվել) Պօղոս և այլն.

Ը՝ն օ թ. օ-ի մասին կարճ կանոն՝ օ գրում ենք այն դէպքերում, ինչտեղ որ մեր նախնիքը գրում են ոզած —։

ը-ի մասին ալ. Նաղուբեանը ասում է՝ կիսաձայն ը հնչիւնը (e muet) առհասարակ դնվում է բառի սկզբին և վերջին, իսկ եթէ բառի սկզբումը ս շ ֆ բաղաձայներից կտաւ պատահում է ք, փ, ի, ֆ,— ը բաց է թողվում, խօսքը ը հնչիւնի մասին է (звукъ ը), բայց նպատակը ը-ի ուղղագրութիւնն է. պարզ կարելի է ասել՝ ը կարող է լսելի լինել բառի սկզբում, մէջում և վերջում, բայց գրվում է միայն սկզբում և վերջում. իսկ բառի մէջինը առհասարակ չէ գրվում, ինչ վերաբերում է ս շ ֆ տառերի ըշ, ըֆ արտասանելու, երբ նրանց հետևում են ք, փ, ի, ֆ բաղաձայնները, չէ կարելի այդպէս ընդհանրացնել. թէ ոչ՝ այն օտարազգիները (նոյն և օտարացած հայերը), որոնց համար գնտղած են յատկաբանում հայոց լեզուի մի քանի գլխաւոր քերականական կանոններ», ալ. Նաղուբեանի ասած այս կանոնի հնման վերայ պիտի ս գ ա լ (սըգալ), տ ե լ (սըտել), գ ե լ (գըտել) և այլն կարդան ը ս գ ա լ, ը ս տ ե լ, ը գ տ ե լ և այլն.

Բաղաձայն տառերի մասին խօսելով, ալ. Նաղուբեանը ասում է՝ «օտար բառերը, որոնց մէջ պատահում են երկու միատեսակ բաղաձայն տառեր [1]), հավերջնում [2]) մէկին է գրվում (միլիոն, Թադէոս և այլն). Ոչ միայն օտարտառի է այդ օրէնքը տեսնել «մի քանի գլխաւոր քերականական կանոնների» չարքում, այլ դա ամենևին պարտաւորեալ օրէնք չէ, քանի որ մենք գրում ենք Յովհաննէս, Աննա և ոչ Յովհաննէս, Անա, և ալ. Նաղուբեանը ոչ իւր, այլ իմ ասածն է հաստատում, գրելով Գաղիա և ոչ Գաղիա (ուղղիմն է՝ Գադղիա).

Դիմենք այժմ ալ. Նաղուբեանի հոլովմունքներին և խոնարհումներին. Հոլովների թվում մենք՝ չենք տեսնում կոչականը, այդ անշուշտ այն պատճառով, որ կոչականը նման է ուղղականին. կարճ լինելու համար դեռ կարելի է բաց թողնել, բայց թէ հոլովների ցանկում չը լինել, ինչպէս այդ անում է ալ. Նաղուբեանը, նշանակում է՝ կարծել թէ հավերջնում այդ հոլովը չը կայ. եթէ ուղղականի նման լինելն է պատճառը, որ ալ. Նաղուբեանը դէն է դցել կոչական հոլովը, ապա ինչու նա դէն չէ դցում և հայցական հոլովը, որը՝ բան նորա քերականութեան, միշտ նման է ուղղականին. Պ. Նաղուբեանը, որը իւր յատ-

---

[1]) Ահելացրէք միասին, կամ մէկը անմիջապէս միւսի վտևից.

[2]) Բնագրում ասված է «на армянской». դա ըստ Աքոնոմոսի չափ կոպիտ տպագրական սխալ է.

ջաբանում վստահաբար ասում է պլատնի բան է պահպանված է արարատեան բարբառի քերականութիւնը, կարծես չը գիտէ թէ՝ այդ բարբառում Հայկական է Տրականին։

Ներգոյականն հոլովը, որ մեր աշխարհաբառում [1]) սովոր ենք տեսնել ում վերջաւորութեամբ, պ. Նաղուբեանի քերականութեամբ ունի և մի ալ ձև՝ մէջ խօսքի օգնութեամբ չինված, օր. ամանի մէջ, գինու մէջ։ Մի կամ մի քանի խօսքերի օգնութեամբ չէ կարելի մի բառի համար հոլով չինել. հոլով չինող բառը հարկաւոր է որ իւր ինքնուրոյն նշանակութիւնը (իբրև առանձին խօսքի) կորցրած և նախդիր դարձած լինի. իսկ մէջ նախդիր չէ, այլ ինքնուրոյն խօսք է։ Եթէ ամանի մէջ ներգոյական հոլով է, ապա ինչ հոլով է՝

ամանի մէջը (դարտակ է)
ամանի մէջի (ջուրը թափիր)
ամանի մէջից (ձեռդ հանիր) և այլն

Երրորդ հոլովադասութեան Ներգոյականը պ. Նաղուբեանի կարծիքով ում վերջաւորութիւնը չ'ունի. սխալվում է. ունի։ Սխալ է նոյնպէս Ներգոյական հոլովին ռուսերէն предложный անուն տալը։ Հասկանալի է որ предложный հոլովին այդ անունը տվել են, որովհետև նախդրով (предлогъ) է գործ ածվում, բայց նա առաջվայի ներքը չէ նշանակում անպատճառ, նա նշանակում է այն, ինչ որ նշանակել է տալիս նախդիրը. въ նախդրով նա նշանակում է մէջը, ներքը, բայց ուրիշ նախդիրներով ուրիշ նշանակութիւններ է առնում (о, на, при, по). մինչդեռ հայոց Ներգոյական հ. միայն առարկայի ներքը կամ մէջն է ցոյց տալիս և այդ պատճառով ևս թարգմանվի Мѣстный կամ Локативный (Locativus). Բացի որ Предложный թարգմանելը ուղղակի սխալ է, մինչ իրաւունք ենք առնում պահանջելու պ. Նաղուբեանից, որ նա մեր Ներգոյականը Локативный կամ Мѣстный թարգմանէ և այն պատճառով որ Գործիականի հոլովի համար նա չէ բաւականացել ռուսերէն Творительный անունով, այլ առել է Инструментальный անունը. այդքան ճշդութիւն, և կողքին կոպիտ սխալ։

---

[1]) Ի դէպ. աշխարհաբառ, գրաբառ-ով գրելը (աշխարհաբար, գրաբար, ինչպէս գրում է Ի Թիւս չատերի և պ. Նաղուբեանը) ևս սխալ եմ համարում. այդ բառը բարդված է կամ բառ կամ (բար)բառ (Նալբանդեանց) բառերի հետ (իբր՝ աշխարհախօս, գրախօս, աշխարհքի լեզու, գրքի լեզու), և արտասանելիս էլ ամէն լսելի է — քան թ. մինչդեռ աշխարհաբառ մակրայ է, ինչպէս գազաննաբար, առիւծաբար և այլն, օրինակ՝ գազաննաբար վարվել, առիւծաբար կարճակվել,— բայց ոչ՝ գազաննաբար մարդ և այլն։

Ուղղականը յոդնակի միավանկ բառերը կազմում են՝ եր վերջաւորութիւնը աւելացնելով եզակի ուղղականի վերայ. հաց, հաց-եր և այլն. այդ նկատում է պ. Նաղաշեանը, բայց ոչինչ չէ ասում թէ ինչպէս են կազմում յոդն. ուղղականը մէկ ու կէս վանկ ունեցող բառերը. օրինակ՝ մչակ, պատակ, կտոր (յոդն. մչակ-ներ, պատակ-ներ, կտոր-ներ). Սերկ. բարդ հոլովադասութեան մէջ (հզ. ուղղ.-ե) նկատ պ. Նաղաշեանը նոր վերջաւորութեան հետ բերէր և + վերջաւորութիւնը, որ այդ հոլովադասութեամբ հոլովող անուանները ունին, այն ժամանակը նա տպագրված չէր լինել իւր բառարանում քարոզելու թէ՝ եւրոպացի - европеецъ, եւրոպացիք — европейцы.

Ինքը դերանունի Անուականը բացի իր է և իրա (ն), Տրական և Հայցական միևնոյն իրեն չէ, այլ և իրան. Գականում է ուղղականը դէմքի համար՝ ինքս (я самъ), 2-դ դէմքի համար ինքդ (ты самъ).

Սա, դա, նա ցուցական դերանունները բերելով, պ. Նաղաշեանը պիտի աւելացնէր որ այդ դերանունները արևելեան բարբառներում (և գրականում) դործ են ածվում իբրև գոյականներ, այսինքն՝ առանց գոյական անունի. սա գնաց, դա եկաւ, նա չը գիտէ, արևմտեան հայերէնում ընդհակառակը՝ ածականներ են (սա մարդը և այլն). Սա դերանունը հոլովելով յոդ. սորանք, սորանց, սորանց, սորանցից սորանցում ձևերը պ. Նաղաշեանը վակագծում է դնում իբրև սակաւ գործածական. իսկ ես բոլորովին կը ջնջէի և դոցա տեղը կը դնէի. սոքա, սոցա, սոցա, սոցանից, սոցանով. այնպէս որ կը ստացվէր՝ սրանք—սոքա, սրանց—սոցա, սրանցով—սոցանով, սրանցում—սոցանում. մինը՝ ժողովրդական և աւելի յաճախ գործածվող մինչև անգամ գրականական լեզվում, միւսը՝ գրաբառաձև և նոյնպէս գործածական. իսկ սրանից, սրանցից և այլն ոչ այս է և ոչ այն, և իմ կարծիքով աւելորդ ձևեր էլ են, քանի որ ոչ ժողովրդական են և ոչ գրաբառ. Պ. Նաղաշեանը պիտի աւելի քան ուրիշ մէկը համաձայնի ինձ հետ և մոցնէ իւր քերականութեան մէջ սոքա, սոցա, դոքա, դոցա և այլն, քանի որ ինքը իւր լառաջաբանում գործ է ածում դ ո ց ա, ն ո ց ա ձևերը, թէև իւր քերականութեանում տեղ չէ տալիս.

Իմ, քո, իւր [1]), մեր, ձեր, իրենց [2]) ստացական դերանունները, իբրև ածականներ գոյականների հետ դրված լինելով, չեն հոլովվում. առանց գոյականի ընկալով (ուրեմն՝ բաց թողված գոյականը փոխարինելով) հոլովվում են. Այդ կանոնը բերել է պ. Նաղաշեանը, բայց մոռացել է աւելացնել, որ այդ դէպքում այդ դերանունները առանում են ցուցական—դիմորոշ յոդ՝ (է)ս (է)դ, (է)ն կամ է(ս), է(դ) է(ն)—մի բան, որ լառում է

---

[1]) Աւելացրէք՝ իր, իրա(ն). իւր և իր առանց գոյականի գործածութիւն չունի. այդ դէպքում գործ է ածվում միայն իրանը.

[2]) Աւելացրէք՝ իրանց.

և հատարակ ածականներին [1]) և եթէ այդ կանոնը գրված լինէր, հարկաւորութիւն չէր լինիլ մ ւ ս և ո ւ ր ի շ բառերը ներքև մ ի ւ ս ը և ո ւ ր ի շ ը ձևերով վիշելու. ընդունի չ'իմացողը կը կարծէ թէ մենք առում ենք մ ի ւ ս օրը, ո ւ ր ի շ ը մարդը, քանի որ իբրև ածական ասվում է մ ի ւ ս օրը, ո ւ ր ի շ մարդ, իսկ իբրև գոլական (բաց թողած գոլականի վոխարէն ը տառնալով) մ ի ւ ս ը, ո ւ ր ի շ ը:

Ա ն ն օ թ. 1. Ցուցական—դիմորոշ յօդը այս դէպքում Ուղղականի համար պարտատրեալ է. միւս հոլովները գործ են ածվում և յօդով և առանց յօդի:

Ա ն ն օ թ. 2. Չարմանալի է որ պ. Նաղուբեանը «օտարազգիների» համար իւր լառաջաբանում զետեղելով «հայոց լեզուի մի քանի գլխաւոր քերականական կանոնները», մոռացել է այդ կանոնների շարքում տեղ տալու հայոց լեզվի մի ամենալի խոշոր առանձնայատկութեանը, որպիսիք են ցուցական—դիմորոշական յօդերը (ը)ս, (ը)դ, (ը)ն կամ ը(ս), ը(դ), ը(ն), Բացի որ այդ ս, դ, ն կամ ը (յայտնի դէպքերում ն) ինքն ըստ ինքեան իրաւունք ունին քերականութեան մէջ տեղ ունենալու, չի որ օտարազգին չը պիտի գտնէ բառարանում բոլոր յօդ ստացած բառերը, կամ եթէ գտնէ էլ՝ ամեն բառը չը պիտի լինի, որն որ հարկաւորէ, օր. բանդ (այսինքն՝ բանըդ, քո բանը, այդ բանը) սա պիտի գտնէ և թարգմանէ тюрьма, темница, վարս [2]) (=վարըս, իմ վարը, այդ վարը) պիտի գտնէ և թարգմանէ кудри, грива, կամ վարդ (=վարըդ, քո վարը)—роза, бантъ. սանդ (=սանըդ, քո սանը)—ступка և ալլն.

Ա մ ե ն ք ը չէ նշանակում всякій, ինչպէս կարծում է պ. Նաղուբեանը, դա լոգնակի է և նշանակում է всѣ. դորա եզակին է ա մ ե ն (ածական) և ահա այդ ա մ ե ն—ն է, որ նշանակում է всякій և որը չէ վիշված.

Դիմենք այժմ խոնարհմունքներին. Դրանք աւելի քան թէ հոլովմունքները քերութիւններ ունեն. Պ. Նաղուբեանը բաժանում է բայերի խոնարհումը չորս յօրդութիւնների, որոնք, ինչպէս նա ասում է, «զանազանվում են իրարից Անորոշի եղանակի (ել իլ ալ անալ) և Անց. Կատարեալի ու Հրամայական եղանակի վերջաւորութիւններով. Ցետոյ, մի քիչ ներքև, նոյն հեղինակը մեզ յայտնում է թէ «երկրորդ յօրդութեան Անորոշի եղանակը վերջանում է նովնալս և ը. իսկ Անց. Կատարեալի և Հրամայ. եղ. վերջաւորութիւնները մենք արդէն ինքներս ենք նոյն հեղինակի քերականութիւնից տեսնում որ միևնոյն վերջաւորութիւններն են, ինչ որ

---

[1]) Օրինակ՝ այս մարդը կարմիր, սպիտակ և սև գոյներից մէկը (այսինքն՝ մէկ գոյնը) պիտի ընտրէր. կարմիրը (այսինքն՝ կարմիր գոյնը) և սպիտակը (այսինքն՝ սպիտակ գոյնը) թողած, նա սևը (այսինքն՝ սև գոյնը) ընտրեց.

[2]) Առանք իսկի վ ա ր (վար ու ցանքս) խօսքը բառարանում չը կայ էլ.

առաջին լծորդութեան համապատասխան ձևերում. ահա մի համեմատական աղիւսակ՝

I լծորդ.	II լծորդ.
Անեղեալ եղան. սիրել	խօսել (ինչպէս խոտով. ինքը պ. նաղ.)
Անց. կատար. սիրեցի	խօսեցի

Հրամայակ. եղ. սիրիր, սիրէ, սիրեցէք. խօսիր, խօսէ, խօսեցէք.

Ուրեմն էլ ինչ միւս երկրորդ լծորդութիւնը կազմելու կամ որոշելու համար. մարդ գրածը ապելուց առաջ՝ առաջ ինքը պիտի կարդալ.

Զորրորդ լծորդութիւնը պ. նաղուբեանը տալիս է այն բայերը, որոնք բալի արմատի և վերջաւորութեան մէջ ստանում են ն (կամ՝ նն) տուֆֆիքսը. օր. հեռ—ան—ալ կամ—ենն—ալ. ուրեմն ննալ ամբողջապէս Անեղեալի վերջաւորութիւն համարելը սխալ է, և եթէ այս տուֆֆիքսը ունեցող բայերը առանձին լծորդութիւն են կազմել [1]) ապա ինչու առանձին լծորդութիւններ չեն կազմել (ա)ն—ել և (ա)ցնել (կամ (ե)ցնել) կազմած բայերը. օր. (զա(ա)նել) զանել (տես (ա)նել) առնել, թռչել, լսացնել, թռցնել և այլն. չէ որ դրա էլ այն առանձնան չեղումն են ել լծորդութիւնից, ինչ առանձնան որ անալ (ենալ)՝ ալ լծորդութիւնից. Ճշմարիտ չարաբաստիկ վիճակ է զանել բառի վիճակը. այդ խեղճ բառը, որ ամենից շատ իրաւունք ունի բառարանում գտնվելու և ամենից քիչ չանսներ ունի մոռացված լինելու, տեղ չէ գտել պ. նաղուբեանի ոչ բառարանումը և ոչ քերականութեան մէջ. Թոմաս էֆենդին կ'ասէր՝ մեծ էշը ախոռումն է մնացել.

Թանի որ խօսքը Անեղեալի մասին է, ի դէպ է ասել՝ կրաւորական բայերը, ըստ քերականութեան պ. նաղուբեանի, վերջանում են ուալ [2]) բայց իսկապէս ոչ պակաս՝ եթէ ոչ աւելի յաճախ տեսնում ենք ուել. այս դէպքում էլ պ. նաղուբեանը, հակառակ իւր կանոնին՝ իւր օրինակներով գալիս է ինձ օգնելու. նորա բառարանում մենք տեսնում ենք՝ բաժանել—բաժանուել, դլորել—դլորուել, ուղղել—ուղղուել և այլն. Ճշմարիտ է՝ նա այդ դէպքերում այդ բայերը չէզոք է անվանել, բայց խօսքը նշանակութեան վերայ չէ այստեղ. դրա կարող են լինել չէզոք (ինչպէս և կրաւորական), բայց կազմութիւնը կրաւորական է (ու նշանը) և այդպիսի բայերը կոչվում են կրաւորական չէզոքական. Այդ ձևը (ուել) ստանում են այժմ մեր լեզուի մէջ (բացի կրաւորական բայերից) շատ չէզոք բայեր, որ պ. նաղուբեանը աշխատում է իւ վերջաւորութեամբ պահել, օր. բախտաւորել (փոխ. բախ-

---

[1]) Լաւ քերականութեան մէջ այդ չէր լինել. կարելի է սրմարցնել ալ լծորդութեանը ան տուֆֆիքսը.

[2]) Տես պ. նաղուբեանի քերականութեան վերջումը ծանօթութիւն.

տատրվել), բորբոքել փոխ. բորբոքվել և այլն. իսկ միւս դէպքերում տատրվել), բորբոքել փոխ. բորբոքվել և այլն. իսկ միւս դէպքերում չէզոք բայերը պ. նշուբեանը խառն է գործ ածում իլ և էլ, օր. բանիլ, բախտաւորիլ, սթափիլ և այլն, բայց՝ սահել, սառել, կարմրել, ծաղկել և այլն.

Դիմենք այժմ բայի եղանակների և ժամանակների. Փոխանակ բայի խոնարհումը պարզացնելու, պ. նշուբեանը աւելի բարդացնում է մի քանի ժամանակներ և մի եղանակ աւելացնելով. աւելորդ եղանակն է Պայմանական եղանակը, իսկ ժամանակները՝ նորա предварительное давнее будущее (futurum exactum) և Սորադասական եղանակի անորոշը և Վերակատարը.

Предварительное будущее (fut. exactum) օր. սիրած կը լինեմ. Եթէ պարզ բայը (սիրել) ունի futurum exactum և այն՝ սիրած կը լինեմ, ապա որ ժամանակն է և ինչու նոյն բայի տակ չը կան սիրած եմ լինելու [1]), սիրած էի լինելու. Սխալվում է պ. նշուբեանը. այդ ձևը սիրել բայի ոչ պարզ ապ բարդ խոնարհումն է (описательное спряженіе), որի համար կարող էր նա առանձին բաժին բանալ, որ սիրած լինել խոնարհման ձևերը չը խառնէր սիրել բայի խոնարհման հետ. Նոյն այդ պատճառով սիրել բայի խոնարհումից դուրս դնելու է և Սորադասական եղ. սիրած լինեմ, սիրած լինէի և Պայմանական եղ. սիրած կը լինէի [2]). Պայմանական եղանակն էլ մի աւելորդութիւն է մեր խոնարհմունքի մէջ. բայը Պայմանական եղանակ կազմելու համար նոր ձևեր կամ վերջաւորութիւններ չէ տալիս, այլ նոյն Սորադասական եղանակի ձևերը՝ սիրեմ, սիրէի (և եթէ ուզում էք՝ սիրած լինէի) գործ ածելով կը մանրիկով, մի նշանակութիւն ենք տանում, թէ, եթէ, որ դնելով՝ մի ուրիշ նշանակութիւն. հիմա ով է մեղաւոր որ կը այն նշանակութիւնը չունի, ինչ որ թէ, եթէ, որ.

Փոխանակ այդ տնտակ աւելորդութիւնների տեղ տալու, աւելի լաւ չէը լինիլ որ մի պարզ բայի խոնարհման մէջ հեղինակը չը մոռանար բնորոշել Բացատրական Ապառնու խոնարհումը և Արդելականի (=Բացատրական Հրամայական) ձևերը.

---

[1]) Օրինակ՝ ամէն անգամ որ նա գալիս է ինձ մօտ, ես ճաշ արդէն կերած եմ լինում, ամէն անգամ որ նա գալիս էր ինձ մօտ, ես ճաշ արդէն կերած էի լինում. ի դէպ՝ լինել բայն չը վերադառնալու համար, պ. նշուբեանը բերում է այդ բայը իբրև էական բայ (быть) և բառարանում էլ չէ տալիս նորա ձևը быватъ. Իբրև էական բայ բերելով նա խոնարհում է՝ եմ, էի և այլն, մինչդեռ այդ խոնարհման մէջ մասնակցում են երկու բայեր (ել, եղանիլ, լինիլ). իսկ լինել բայի իսկական խոնարհումը չէ լիշված՝ լինում եմ, լինում էի և այլն.

[2]) Մեր ասածը վերաբերում է ի հարկէ և միւս օրինակներին.

Ապառնի. կը սիրեմ բայց չը կալ Բացաս. Ապառ. չեմ սիրիլ [1])
կը սիրես չես սիրիլ
կը սիրէ չի սիրիլ
և այլն և այլն
հրամ. սիրէ կամ սիրիր չը կալ արգելական մի սիրիլ (կամ սիրիր)
սիրեցէք մի սիրէք

Անցեալ կատարեալը պ. Նաղուբեանը թարգմանում է Perfectum: Ահւի ճիշդ և յարմար կը լինէր, եթէ թարգմանէր Aoristus. այն ժամանակը նա միջոց կ'ունենար մեր Ցարակատարը թարգմանելու Perfectum graecum կամ Perfectum logicum փոխանակ Предварительное прошедшее, որ ռուսի համար անհասկանալի է [2]), և սխալ էլ է. մինչդեռ այդ մեր Ցարակատարը ամեն ճշդութեամբ համապատասխանում է լուծաց Perfectum-ին կամ այն ժամանակին, որ լատիներէն անվում է perfectum logicum.

Ցետոյ՝ աշխատել զանազան մակբայներով (уже, тогда և այլն) բացատրել ժամանակի միտքը և նրբութիւնը՝ զուր է. դա միևնոյն է՝ նպատակին չէ հասցնում. իսկ խօսել թարգմանել заговорить, սիրեցի—слюбилъ, այն էլ օրինակ բերված բայերում՝ նշանակում է դիւրութեամբ թէ անդիտութեամբ տարակուսութիւնների տեղիք տալ.

Մի նկատողութիւն էլ և այդ կը լինի վերջինը, ինչքան էլ որ կարճ գրված լինի քերականութիւնը, ինչքան էլ որ նա՝ օժանդակ և ոչ գլխաւոր մաս համարված լինելով միայն լեզվի գլխաւոր կանոնները պարունակէր, երանելց այնուամենայնիւ իրաւունք ունինք պահանջելու, որ տեղ տար՝ 1) գալ, տալ, լալ բայերի խոնարհմանը (գալիս եմ, տալիս եմ, լալիս եմ՝), 2) ուտենալ, դիտենալ, արժենալ բայերի խոնարհման առանձնայատկութեանը, 3) գալ և ուտել ալլարմաս բայերի ձևերին. գալ—եկայ, ուտել—կերայ. Այս գործածական բայերի մասին ոչինչ չէ ասում ոչ իւր քերականութեան և ոչ իւր բառարանի մէջ պ. Նաղուբեանը, որը չէ մոռանում ամենազգուշ հեռատեսութեամբ թարգմանելու՝ նամակ գրել—писать письмо, տիկին—мадамъ!

Ես վերջացրի իմ ասելիքը պ. Նաղուբեանի հայերէն-ռուսերէն բառարանի մասին. Չը գիտեմ ինչ եղրակացութեան կը գալ ընթերցողը, իսկ ինձ համար պարզ է որ՝

---

[1]) Եւ անպատճառ՝ սիրէ և ոչ՝ սիրի, և երրորդ դէմքը՝ չի և ոչ՝ չէ.

[2]) Նրա համար այդ համարեա միևնոյնն է, ինչ որ прежде прошедшее կամ Давнопрошедшее.

Պր. Նաղուբեանի խոստովանութիւնը թէ իւր բառարանը ունի «բազմաթիւ պակասաւոր կողմեր» լոկ համեստութիւն չէ, այլ իրողութիւն է։

1. Աւրդարև բաց են թողնված «բազմաթիւ բառեր, որոնք պիտի լինէին այս բառարանում» և ընդհակառակը՝ բերված են արհմտեան (Ախալցխայի) գաւառաբանութիւններ, որ աւելորդ կարելի է համարել այս տեսակի բառարանի մէջ։

2. Իւր բառարանը կազմելու համար պ. Նաղուբեանը գրականութիւնը ոչ միայն ամբողջապէս, այլ բաւականաչափ չէ կարդացել. իսկ

3) Բարբառների գրականութիւն ունենալը և չտեղի հետազոտված լինելը նա չը դիտէ անգամ («դեռ մշակուած, անգամ գրի առնուած չէ»)։

4. Ոչ միայն չատ դործածական բառեր պակասում են, այլ բերվածների նշանակութիւնը լաճախ ոչ ճիշդ և ոչ գլխաւորն է տրված, լաճախ անգամ բոլորովին սխալ նշանակութիւն է տրված բառին, և երբեմն դործածական նշանակութիւնները ոչ բոլորն են բերված։

5. Նոյնը կարելի է ասել և դարձվածների մասին. կարևոր, բնորոշ և առանձնայատկութիւն ունեցող դարձվածները լաճախ պակասում են, և ընդհակառակը՝ չատ լաճախ հասարակ և բառացի թարգմանվող նախադասութիւններ և խօսքեր դարձվածներ են համարված և մէջ բերված ու թարգմանված։

6. Վերականութիւնը (ասինքն՝ տառերը, ուղղագրական և քերականական կանոնները) կիսատ-պռատ է, սխալներ է պարունակում, անհմուտ է կազմված և չատ կարևոր բաներ պակասում են. մանաւանդ թոյլ են բայերը։

7. Ռուսերէն լեզվի սխալները, ինչպէս և հայերէնի ուղղագրական և լեզվի սխալները [1]), բառերի և դարձվածների լաճախ սխալ թարգմանելը ցոյց է տալիս որ հեղինակը բառարան կազմելու հարկաւոր պատրաստութիւնը չէ ունեցել և ոչ ժամանակ, ինչպէս խոստովանում է ինքը իւր վառաջաբանում։

Բայց մի՞թէ, կը հարցնեն ինձ, պ. Նաղուբեանի բառարանը ոչ ոքի և ոչինչ բանի պէտք չէ. ինչու չէ. մեր այն գիմնազիստները, որոնք սկսում են իրանց ուսումը լատինից դէպի անլատը գնալով և վերջացնում են նրանով որ լատինին (մայրենի լեզուն) մոռանում են, մոռացածը կրկին սովորելու համար, լատնի դրուչութիւն և մի քիչ էլ բնագրումն ունենալով, առաջին ժամանակները կարող են օգտվել այդ բառարանից,

---

[1]) Օրինակներ պ. Նաղուբեանի վառաջաբանից. աչխատարար (առանց հ), համառում, պիտի արժէր, կոպէկ, բանկացած (ասլպէս կարելի է գրել բանկալ, բանկալեան և բայց ոչ՝ բանկանալ), կատարելութեան մօտիկ անգամ իսօք չէ կարող լինել, որ և է լրիւ թէֆեազ ամենաթեթև բառարան կազմել, մաթեմաթիկայի և այլն։

համբերութիւն ունենալով ի հարկէ՝ ոչ սակաւ անգամ ուրիշ բառարաններ դիմելու [2]). Բացի դորանից պ. Նաղուբեանի բառարանը տալիս է բառերի պատշաճաւոր այբուբենական ցանկ, որի մէջ պակասները լրացնելով և աւելորդները դուրս գցելով, նոյնպէս և բերած բառերի դարձուածական նշանակութիւնների կիսատը լրացնելով և սխալը ուղղելով կարելի է կազմել մի աւելի կատարեալ բառարան. Բայց քանի որ պ. Նաղուբեանի բառարանը այն է ինչ որ նա կալ ուժմ իւր «բազմաթիւ պակասաւոր կողմերով», իւր՝ այս բոլէիս լիշած հօթը մեղքերով, նա չէ կարող լուրջ գործ համարվել և սպասած օգուտը տալ. Մինչև հիմա թվալի կերպով պակասում էր մեզ մի հայերէն-ռուսերէն բառարան. լոյս տեսաւ պ. Նաղուբեանի բառարանը, բայց այդ պակասը չը լրացրեց. բանաստեղծի [3]) ասած՝

Три граціи считались въ древнемъ мірѣ;
Родились вы... все три, а не четыре.

Մոսկվա, յունվ. 1, 1892 թ.

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆՑ

---

[2]) Պր. Նաղուբեանի հէնց լառաջաբանը կարդալու համար, մի քանի անգամ՝ իւր բառարանը թողած, պիտի դիմենք ուրիշ բառարաններին և քերականութիւններին.

[3]) Լերմոնտով.